

# ԶԱՐՏՈՆԿ

Օրաթերթ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMÉNIEN

جارتونك جريدة سياسية أرمنية

«Չարթօնք»ը կարելի է կարդալ նաեւ համացանցի վրայ հետեւեալ հասցեով՝ [www.zartonkdaily.com](http://www.zartonkdaily.com)  
Ինչպէս նաեւ ձեր անհատական թղթակցութիւններն ու ծանուցումները կրնաք փոխանցել խմբագրութեան հետեւեալ հասցէներուն՝  
e-mail: [zartonkadl@gmail.com](mailto:zartonkadl@gmail.com)  
P.O.Box: 11-617 & 175-348  
Beirut-Lebanon  
Tel./Fax: +961 1 444225

Երկուշաբթի / 15.1.2018 | 81րդ Տարի, թիւ 87(22,114) | Տարեկան Բաժանորդագին՝ 225,000 Լ.Ո. | Հատվածամ` 1000 Լ.Ո. / 8 Էջ

## Լիբանանեան Լուրեր

### Ահաբեկչական Պայթում Սայտա Քաղաքին Մէջ. Թիրախը «Համաս»-ի Մէկ Պատասխանատունն Է



Ահաբեկչական պայթում մը գրանցուեցաւ երեկ Լիբանանի հարաւի մայրաքաղաք համարուող Սայտա քաղաքին մէջ: Պայթումը արդիւնք էր ինքնաշարժի մը մէջ զետեղուած լարուած ականի մը:

Աւելի ուշ յայտնի դարձաւ, որ ահաբեկչութեան թիրախն է պաղեստինցի գործիչ Սոհամմատ Համտան, որ դէպքէն անմիջապէս ետք փոխադրուած է հիւանդանոց եւ կ'ենթարկուի վիրաբուժական գործողութեան: Թէեւ յայտնի դարձաւ, որ Համտանի կեանքին լուրջ վտանգ չի սպառնար, սակայն մինչեւ այս լուրին գրառումը ստոյգ տեղեկութիւններ կը պակսին: Նշենք, որ Համաս շարժումի անդամ Համտան ուսուցիչ է Սայտայի Իման վարժարանին

մէջ: Հաղորդուեցաւ, որ դէպքը տեղի ունեցած է Սայտայի Պուսթան ալ քապիր շրջանին մէջ եւ պայթումը տեղի ունեցած է, Համտան պիտի բաւարար իր ինքնաշարժի դուռը:

Իր կարգին, Սայտայի «Ալ Զուտս» մզկիթի բանբեր Շէյխ Մահեր Համուտ նկատել տուաւ, որ այս դէպքէն միակ օգտուողը Իսրայէլն է: «Ալ ժատիտ» կայանին հաղորդմամբ, ինքնաշարժի պայթումին ընթացքին իսրայէլեան օդանաւ մը երեւցած է շրջանին մէջ:

Կը հաղորդուի նաեւ, որ Համտան կարելոր դեր կը կատարէր Լիբանանի ներ-պաղեստինեան հարցերու ապահովական խնդիրներու առջնութեամբ:

## Շրջանային Լուրեր

### Ինչո՞ւ Կը Փորձեն Քողարկել Ռաքքայի Մէջ Տիրող Իրավիճակը. Սուկուայի Հարցադրումը

Ռուսիոյ Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական խօսնակ Մարիա Զախարովա յայտարարած է, որ, Ռուսիոյ կարծիքով, արեւմտեան լրատուամիջոցներն ու քաղաքական շրջանները միտումնաւոր կերպով կը թաքցնեն Ռաքքայի մէջ տիրող իրավիճակը, որպէսզի կասկածի տակ չդնեն Ռաշիսկընի կողմէ ձեռնարկուող գործողութիւնները: Այս մասին կը հաղորդէ «Ալ ժատիտ» լրատուական կայքը:

Զախարովա նշած է նաեւ, որ դժուար է տեղի ունեցածին այլ բացատրութիւն տալ, որովհետեւ միայն այդ ձեւով է, որ կրնան հիմնաւորել ԱՄՆ ուժերուն ոչ օրինաւոր կերպով Սուրիոյ մէջ մտնելը:

Վերջինս անդրադարձած է նաեւ այն հանգամանքին, որ 2018 թուականի առաջին օրերէն աւելցած է Ալ Նուսրայի եւ միւս ահաբեկչական խմբաւորումներու սադրանքը՝ դիտել տալով, որ Ալ Նուսրան չէզոքացնելու պարտականութիւնը ԱՄՆ-ին վրայ է:

### Սուրիոյ Բանակը Թուրքիոյ Կողմէ Օժանդակուող Խմբաւորման Յարձակում Մը Խափանեց

Սուրիոյ պաշտօնական «Սանա» լրատուական գործակալութիւնը յայտնած է, որ Իտլիպի արուարձանին մէջ Սուրիոյ բանակը Թուրքիոյ կողմէ օժանդակուող Թուրքիստանի կուսակցութիւն ահաբեկչական խմբաւորման յարձակում մը խափանած է:

Աղբիւրին փոխանցմամբ, խմբաւորման զինեալները փորձած են ներթափանցել Իտլիպի արուարձանները Սուրիոյ բանակին ենթակայ շրջաններ՝

խափանելու համար բանակի յառաջխաղացումը դէպի Ապու Ալ Չուհուր ռազմական օդակայան:

Բանակի հրամանատարութեան փոխանցած տեղեկութիւններուն համաձայն՝ Թուրքիստանի կուսակցութիւն խմբաւորման զինեալները, իրենց ուժերը հաւաքելով, Լաթաքիոյ հիւսիսային արուարձանէն ու ճար Ալ Շուդուրէն եկած ու իրենց ռազմական մեքենաներով կեդրոնացած են Իտլիպի արուարձանին մէջ:

## Հայրենի Լուրեր

### Հակառակորդը Հրադադարի Ռեժիմը Խախտած Է Շուրջ 200 Անգամ՝ Հայ դիրքերու Ուղղութեամբ Արձակելով Աւելի Քան 2000 Կրակոց. 7 Օր Առաջնագիծին



Յունուարի 7-էն 13-ը ինկած ժամանակահատվածին արցախա-ագրպէյճնական հակամարտ գործերու շփման գիծին հակառակորդը հրադադարի պահպանման ռեժիմը խախտած է շուրջ 200 անգամ՝ հայ դիրքերու ուղղութեամբ արձակելով աւելի քան 2000 կրակոց:

Բացի հրաձգային զինատեսակներէն, ագրպէյճնական զինուժը առաջնագիծի տարբեր հատվածներուն մէջ կիրարկած է նաեւ խոշոր տրամաչափի գնդացիներ եւ դիպուկահար հրացաններ:

ՊԲ առաջապահ գործաւորները կը շարունակեն վստահօրէն իրականացնել իրենց առջեւ դրուած մարտական խնդիրը՝ անհրաժեշտութեան պարագային դիմելով նաեւ պատասխան գործողութիւններու:

## Լուրեր Արաբական Աշխարհէն

### Պըն Սալմանի Թագադրման Օրը «Ճատ Մօտ Է»



Թուրքիոյ «Քաշքուլ» էջը, գրառում մը հրապարակելով, յայտնած է, որ Սեուտական Արաբիոյ գահաժառանգ Մուհամմատ Պըն Սալմանի թագադրումը շատ մօտ է՝ շեշտելով, որ ան մտադիր է թագաւորական գահ բարձրանալ նախքան իր յառաջիկայ այցը ԱՄՆ:

Մանրամասնելով տեղեկութիւնը՝ «Քաշքուլ» նշած է, որ Պըն Սալմանի թագադրութիւնը պայմանաւորուած է երկու այցով. առաջինը՝ յառաջիկայ ամսուան ընթացքին ԱՄՆ կատարելիք այցը, ուր կը ցանկայ մեկնիլ որպէս թագաւոր, երկրորդը՝ ԱՄՆ-Շոնի երկիրներ համագումարն է, որ նախատեսուած է կազմակերպել երեք ամիս անց:

# Արցախը Նախորդ Շաբաթ

ՆՈՐԱՅՐ ՅՈՎԱԵՓԵՆԱՆ  
«Չարթոնք»ի Արցախի Աշխատակից

2018-ի մեկնարկը ցոյց տուաւ, որ տարին Արցախի շուրջ քաղաքական ու ռազմական առումով կտրուկ փոփոխութիւններ դժուար թէ բերէ: Համենայնդէպս, իրադարձութիւնները կը զարգանան միեւնոյն տրամաբանութեամբ, այնպէս ինչպէս նախորդ տարի: Հակառակորդն ալ հերթական կերպով ապացուցեց, որ պատրաստ չէ հրաժարիլ ոչ հակահայկական հռետորաբանութենէն ներքին եւ արտաքին լսարանին մէջ եւ ոչ ալ սադրանքներէն՝ առաջնագծին վրայ:

Աւանդաբար, տօնական օրերուն Ազրայէճան կը փորձէ Արցախի սահմանին վրայ իրավիճակը լարել: Այդ օրերուն զգալի կերպով կ'աշխուժանայ հակահայկական քարոզչութիւնը, յատկապէս ներքին լսարանին համար: 2018-ի մեկնարկն ալ այդ առումով նորութիւններ չբերաւ: Ինչպէս արդէն կ'ակնկալուէր, Ալիեւը տօնական օրերուն արցախեան թեմայականին անդրադառնալու հնարաւորութիւններ ունեցաւ: Մինչեւ անգամ ամանորեայ ուղերձի մեծ մասը նուիրեց Արցախին եւ հակահայկական յայտարարութիւններուն: Նորութիւնները կապուած էին Ազրայէճանի տարած հերթական յաղթանակներուն: Կը պարզուի, որ ապրիլեան պատերազմի ժամանակ ազրայէճանական կողմի հսկողութեան տակ անցած է ոչ միայն ճոճուք Մարճանլի (Արցախի հարաւ), այլեւ Շիխարիս գիւղը (Արցախի հարաւ): Խօսքը ուղղակիօրէն կը վերաբերի Մարտակերտի շրջանի Լեւինաւան-Մարաղայ գիւղին, որուն բնակիչներու կոտորածը 1992 թուականի Ապրիլ 10-ին կազմակերպուեցաւ ազրայէճանական ուժերու կողմէ եւ որ 1990-ականներէն կը գտնուի ազրայէճանական գերութեան տակ: «Խորքին մէջ, եթէ ազրայէճանցիներուն յաջողուէր նոյնիսկ տնակ մը գրաւել, հազար անգամ յայտարարած կ'ըլլային եւ ոչ թէ մեկուկէս տարի կը սպասէին ու նոր միայն կ'ըսէին իրենց յաջողութիւններուն մասին,- Ալիեւի հերթական յայտարարութիւնը Արցախի նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութեան պետ Դաւիթ Պապայեան ծիծաղելի կը համարէ: - Ասիկա արդէն ծաղրանք կը համարուի ազրայէճանցիներուն նկատմամբ՝ նման բացայայտ սուտը, նման բարձր մակարդակով»:

Թէ Պաքուն այս տարի եւս առողջ տրամաբանութեամբ ռեւէ մեկուն չի գարմացներ՝ տարեսկիզբին

## Կրակոցներ Արցախի Սահմանին Վրայ. 2018-ն Դրական Փոփոխութիւններ Չի Խոստանար

անգամ մը եւս Իլիամ Ալիեւի քաղաքական գծով օգնական Ալի Հասանով այդ խնդրով ապացուցեց իսրայէլական թերթերէն մեկուն տուած իր հարցազրոյցին ընթացքին՝ նշելով, որ Պաքու արցախեան խնդրի կարգաւորման խաղաղ ուղիին կողմնակից է եւ որ այդ կարգաւորման մէջ առաւելագոյն զիջումը կրնայ ըլլալ Ազրայէճանի կազմին մէջ Արցախի որոշակի ինքնավարութիւնը: Ինչպէս կ'ըսեն՝ մեկնաբանութիւնները աւելորդ են: «Պաքու շատոնց արդէն պետք է համակերպուած ըլլար իրականութեան: Արցախ արդէն 30 տարիէ Ազրայէճանի կազմին մէջ չէ: Ինչ բանակցութիւններու մասին կրնայ խօսք ըլլալ, եթէ Պաքուի ներկայացուցիչը Արցախի ապագան Ազրայէճանի կազմէն դուրս չի տեսներ», - իր տարակուսանքը կը յայտնէ Դաւիթ Պապայեան:

Իսկ թէ խաղաղ կարգաւորման տակ ինչ կը հասկընան Պաքուի մէջ՝ դժուար չէ գուշակել: Յունուար 7-ին ՊԲ հիւսիս-արեւելեան ուղղութեամբ տեղակայուած զօրամասերէն մեկուն պահպանութեան տեղամասին մէջ հակառակորդի կողմէ արձակուած կրակոցէն մահացու կերպով վիրաւորուած է ՊԲ զինծառայող, 1998-ի ծնունդ վաչէ Չիլինգարեանը: Արցախի նախագահի հրամանագիրով՝ ան յետմահու պարգեւատրուած է «Մարտական ծա-

ռայութեան համար» մետալով: Առաջնագծին վրայ տեղի ունեցած դեպքի մանրամասնութիւններուն անդրադարձած է ՀՀ ՁՈՒ ԳՇ պետ Մովսէս Յակոբեան. «Հակառակորդի դիպուկահարի կրակոցէն զոհուած է մեր զինուորը: Չինք օգնելու համար անոր առջեւ նետուած սպան եւս թեթեւօրէն վիրաւորուած է: Վիրաւորուած է նաեւ դեպքի վայր շտապող խումբի մեքենայի վարորդը: Վիրաւորներու վիճակը նորմալ է»: «Ասիկա Ազրայէճանի ցեղապաշտական, հակամարդկային, ահաբեկչական քաղաքականութեան եւս մէկ դրսեւորումն է, որ սակայն ուժերու հաւասարակշռութեան մէջ ոչինչ կը փոխէ: Ժամանակին Ստեփանակերտը առաջարկած էր տօնական օրերուն առաւել եւս՝ հրադադարի կարգը չխախտել: Պաքու հակառակը կը կատարէ՝ հարուածի տակ դնելով իր զինուորներուն: Ի վերջոյ, հայկական կողմը իր զինուորի մահը անպատիժ պիտի չձգէ», - կ'ընդգծէ Դաւիթ Պապայեան:

Փոխվստահութեան, աւելի ճիշդ, անոր բացակայութեան ահա այսպիսի պաշարով կը սպասուի Հայաստանի եւ Ազրայէճանի արտաքին գործոց նախարարներու հերթական հանդիպման, որ 2017-ի վերջերուն ձեռք բերուած պայմանաւորուածութիւններուն համաձայն՝ պետք է կայանայ 2018-ի Յունուարին:

## Արցախ Այցելած Օտարերկրացի Չբօսաշրջիկներու Թիւը 2017-ին Աւելցած է 41 Տոկոսով

2017 տարեշրջանին Արցախ այցելած է աւելի քան քսաներեք հազար օտարերկրացի զբօսաշրջիկ: Անկախութենէն ի վեր աճի ամենաբարձր ցուցանիշը արձանագրուած է. 2016-ի համեմատելով՝ 41 տոկոս: Ապրիլեան պատերազմի բացասական ազդեցութիւնը հաշուի առնելով՝ ցուցանիշները համեմատութեան կը դրուին 2015-ի հետ: Այս պարագային ալ աճը շուրջ 30 տոկոս է: Ըստ թիւի կարգի՝ մեծ թիւով օտարերկրացի զբօսաշրջիկներ Արցախ այցելած են Ռուսաստանէն, Միացեալ Նահանգներէն, Ֆրանսայէն եւ Իրանէն, որոնք հայկական մեծ համայնքներ ունին: Ասոր կողքին, պետք է նշել, որ այլազգիներու այցելութիւնները եւս կ'աւելնան: Արցախը այցելուներուն ներկայացնելու նոր գործիքները իրենց դրական արդիւնքները կու տան: «Ատիկա թէ՛ միջազգային



ցուցահանդէսներուն աշխոյժ մասնակցութիւնն է, թէ՛ համացանցի վրայ աշխոյժ, մինչեւ անգամ ակրեսիւ առետրային քաղաքականութիւնը», - կը թուարկէ Արցախի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ զբօսաշրջութեան հարցերու նախարարութեան զբօսաշրջութեան վարչութեան պետ Արտակ Գրիգորեան:

Էջ 07



### Պատմութեան Մէջ Այսօր

### Հրաչ Զարդարեան

Հրաչ Զարդարեան (15 Յունուար, 1892, Խարբերդ - 30 Նոյեմբեր 1986, Փարիզ), հայ գրող, թարգմանիչ, իմբազիր, հասարակական-քաղաքական գործիչ: Ծնած է Խարբերդ: Մանուկ հասակէն հետեւած է հորը աստանդական կեանքին՝ Իզմիր, Մանիսայ, Ֆիլիպէ,

Պոլիս: Պոլսոյ մէջ իբրեւ ուսուցիչ կը պաշտօնավարէր իր հայրը՝ գրագետ Ռուբէն Զարդարեան:

Հ. Զարդարեան իր ուսումը ստացած է Կարին: Հոն մնացած է երեք տարի, Սանասարեանի իբրեւ գիշերօթիկ աշակերտ: Երբ վարժարանը Սեբաստիա կը փոխադրուի, կը վերադառնայ Պոլիս ու Կեդրոնականի մէջ կ'աշակերտէ Դուրեան Սրբազանին, Մելքոն Կիւրճեանին (Հրանդ), Ինտրային, Ռ. Զարդարեանին, Խաժակին, Շանթին եւ ուրիշներու:

Այդ տարին իսկ, երբ պիտի լրացներ Կեդրոնականի ընթացքը, տարագրութեան խռովայոյզ օրերուն, կը հարկադրուի անցնիլ Կովկաս, ուր յաջորդաբար կը յաճախէ Ներսիսեան վարժարանին, Գեորգեան ճեմարանին եւ Երեւանի Թեմական դպրոցին, ուրկէ կը ստանայ ասորականի իր վկայականը: Նոյն տարին կ'անցնի Փարիզ: Այնտեղ կը հետեւի Սորպոնի գրականութեան դասընթացքներուն, կը յաճախէ քաղաքական եւ բարոյական գիտութեանց համալսարան, ապա Բժշկական վարժա-

րան: Ռուբէն Զարդարեանի սպանութենէն ետք անոր կինը զաւակներով միասին կ'անցնի Պալքաններ, այդտեղէն՝ հարաւային Կովկաս: Ի վերջոյ, Հրաչ Զարդարեան կը հաստատուի Փարիզ: Որոշ մասնակցութիւն կը բերէ փարիզահայ գրական նոր շարժումին:

Կը հաստատուի հարաւային Ֆրանսա: Զարդարեանի գրական վաստակը, բացի երկու վեպերէն, գումարն է բազմաթիւ երկարաշունչ պատմուածքներու, որոնք ցրուած են գրական հանդէսներու եւ թերթերու մէջ, ներառեալ կարգ մը անտիպ հատորներու, որոնք կը սպասեն հրատարակութեան: 1930-ականներուն լոյս կ'ընծայէ իր առաջին վեպը եւ մամլոյ մէջ կը հրատարակէ պատմուածքներ, խորհրդածական փորձեր ու այլ գրութիւններ:

- Գործերէն են՝
- «Մեր Կեանքը»
- «Որբացող Մարդիկ»
- «Ժամանակ եւ Խորհուրդ Իւր»



# Լիբանանահայ Կեանք

Անդրադարձ

## Ապրի՛ս Ալիս... Ապրի՛ր, որ Ապրեցնես...



չէ ընդհանրացնել:

Վերոյիշեալ ելոյթի մեծ մասը յատկացուած էր լիբանանահայ երգչուհի Ալիս Իփրաճեանին, որ լիբանանեան գաղութին մէջ զանազան առիթներու բեմ բարձրանալով՝ արժանաւորապէս հնչեցուցած է հայ երգն ու երաժշտութիւնը՝ ազգային, հոգեւոր, ժողովրդային եւ այլն:

Ալիս Իփրաճեանին ձայնը իւրայատուկ է այն իմաստով, որ կրնայ յարմարիլ երաժշտական բոլոր ժանրերուն անխտիր ու բոլորն ալ իր իւրայատուկ ոճով ու շունչով: Ալիսը կրնայ աշուղական երգելով յուզել հանրութիւնը, ազգայինով ոգեւորել ու ժողովրդայինով եւ կամ գաւառականով խանդավառել մթնոլորտը եւ այդ մէկը ինքնին շնորհք մըն է, որ տրուած չէ ամէն բեմ բարձրացողի:

Կը յիշեմ, տարիներ առաջ Ատիս Զարմանտեան մեծ երաժիշտը, խօսելով Ալիս Իփրաճեանին մասին, կ'ըսէր, որ անոր ձայնը համաշխարհային բեմերու վրայ ելոյթ ունեցող մեծ երգիչներու ձայներուն մրցակից է ու որոշ ճիգով Ալիսը կրնայ դառնալ այդ աստղերէն մէկը, սակայն մեր գաղութներուն մէջ քիչ մը երաժշտութեան հանդէպ տրուած արժեւորումը տարբեր է, քան մեր կարծածը, որովհետեւ դժբախտաբար ներկայիս լաւ երգիչ անպայմանօրէն լաւ ձայն չէ որ կը նշանակէ, այլ ծանօթութիւն ու նիւթական կ'ենթադրէ... ու բաւարար կ'ըլլայ, որ ուզողը դառնայ երգիչ:

Վարձքը կատար թեքեան Մշակութային Միութեան, որ իրապէս իրենց անուան հաւատարիմ հայ մշակոյթն է, որ առջեւ կը տանին ու մեր ազգը պարտաւոր է Ալիսն ու Ալիսին նմանները ապրեցնելու, որպէսզի իրենց ճամբով ապրի նաեւ հայ երգն ու երաժշտութիւնը:

Ապրի՛ս Ալիս... Ապրի՛ր, որ ապրեցնես Սայաթ-Նովան ու ապրի հայ մշակոյթը:

ՉՈՒՆԱԼ

\*\*\*


**Նշենք, որ ձեռնարկի ամբողջական թղթակցութիւնը լոյս պիտի տեսնէ մեր վաղուայ թիւով: «Խմբ.»**

# Գիտութեան Զետքերով

## Տիեզերքի Մէջ Օտարականնէ՛ր. «Infographic»

Գիտնականները երկու երկնաքարերու վրայ շուր եւ օրկանական միացութիւններ բացայայտած են, որ ամենայն հաւանականութեամբ 4.5 միլիարտ տարեկան են, այսինքն՝ մօտաւորապէս Երկիր մոլորակի գոյացութեան սկիզբէն: Այսպիսով, տիեզերքի մէջ կեանքի ու այլ մոլորակայիններու գոյութեան մասին պրպտումները նոր ուղղութիւն կը ստանան:

«Sky News» լրատուական ցանցին փոխանցմամբ՝ գիտնականները, 20 տարի առաջ Երկիր մոլորակի վրայ ինկած երկու երկնաքարերու ժայռերը ուսումնասիրելով, պարզած են կեանքի հիմնական բաղադրիչներ եւ հակառակ անոր որ նման բացայայտում կտրուկ կերպով չի հաստատեր անոնց վրայ կեանք եղած ըլլալու հանգամանքը, սակայն կ'ակնարկէ որեւէ այլ վայրի մէջ կեանք գոյութիւն ունեցած ըլլալու հաւանականութեան:



# Քաղուածքներ Օտար Մամուլէն

## «ԺԱՄԱՆԱԿ»-ը Աշխարհի Զնագոյն Փոքրամասնական Թերթն Է. «Anadolou» Գործակալութեան Անդրադարձը



«Անատոլու» լրատուական գործակալութիւնը յատուկ թողարկումով մը անդրադարձած է հայաշխարհին հնագոյն պարբերականին Պոլսոյ մէջ տպագրուող «Ժամանակ» պարբերականին հիմնադրութեան 110-ամեակին:

Գործակալութիւնը յատուկ թողարկում մը կատարելով՝ նկատառման յանձնեց այս յոբելեանը՝ թղթակցներէն Չիյտեմ Ալեանաքի ստորագրութեամբ: Թողարկումը կատարուեցաւ Զամաշխարհային գործող լրագրողներու օրուան շարժառիթով եւ ընդգծուեցաւ, որ «ԺԱՄԱՆԱԿ»-ը աշխարհի հնագոյն փոքրամասնական թերթն է: Գործակալութիւնը այս թողարկումին կցած է բազմաթիւ լուսանկարներ: Այս թողարկման պատրաստութեան համար թղթակցի Չիյտեմ Ալեանաք եւ լուսանկարիչներէն Օսուր Զոպան միասնաբար այցելած են թերթին խմբագրատուն: Գործակալութիւնը թողարկած է լուսանկարչին կողմէ այս առթիւ կատարուած նկարահանումներէն դրուագներ, ինչպէս նաեւ թերթին վերաբերեալ իր արխիւէն հին դրուագներ: Ներկայացուած լուսանկարներուն մէջ կան «ԺԱՄԱՆԱԿ» օրաթերթի խմբագրատունէն տեսարաններ, թերթի գլխաւոր խմբագիր Արա Գօջունեանի դիմանկարները, «ԺԱՄԱՆԱԿ» օրաթերթի առաջին համարը եւ անոր հիմնադիրներուն՝ Միսաք եւ Սարգիս Գօջունեան եղբայրներու դիմանկարները: Ընդգծուած է, որ «ԺԱՄԱՆԱԿ» օրաթերթը թուրքիոյ մէջ 110 տարիէ ի վեր կը հրատարակուի անընդհատ:

Թերթի պատմութեան եւ առաքելութեան առանձնայատկութիւններուն վերաբերեալ երեսակներու բացատրութեան զուգահեռ՝ թողարկման մէջ շեշտուած է, որ «ԺԱՄԱՆԱԿ» օրաթերթը ունի պատմական արխիւի մը բնոյթը, որովհետեւ եղած է թէ՛ Օսմանեան կայսրութեան եւ թէ՛ Թուրքիոյ Զանրապետութեան ականատեսը: Մասնաւորապէս շեշտուած է, որ վերջին տարիներուն ստեղծուած համացանցային կայքէջով «ԺԱՄԱՆԱԿ» օրաթերթը այսօր հասանելի է աշխարհի չորս կողմերուն:

Գօջունեան նաեւ նշած է, որ «Ժամանակ» անկախ օրաթերթ մը եղած է իր գոյութեան ողջ տեւողութեան:

# Մշակութային Արձագանգ

## «Հրանդ Տինք» հիմնարկի «Հաւաք» սրահի երդիքին տակ տեղի ունեցաւ շահեկան ասուլիս մը

### Արժեքներու Հետքով

Հայաստանի Ազգային գրադարանը յաջորդ տարի պիտի նշէ իր հիմնադրութեան 100-ամեայ յոբելեանը - այս տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ նախատեսուած է թուային գրադարաններու հինգերորդ խորհրդածողովը. Տիգրան Չարգարեան եւ Անդրանիկ Տազետեան հանդէս եկան գեկուցումներով, նաեւ պատասխանեցին հարցումներու:

Հայաստանի Ազգային գրադարանը, որ հիմնուած է Առաջին հանրապետութեան շրջանին՝ 1919 թուականին, կը պատրաստուի յառաջիկայ տարի նշել իր հիմնադրութեան 100-ամեայ յոբելեանը: Իսկ այս տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի պիտի ունենայ թուային գրադարաններու 5-րդ հաւաքը:

Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէն Տիգրան Չարգարեան Իսթանպուլի մէջ տեղեկացուց այս ծրագրերուն մասին: Ան կոչ ուղղեց՝ որպէսզի փափաքողներ իրենց ունեցած աղբիւրները տրամադրեն Հայաստանի Ազգային գրադարանին: Այս ուղղութեամբ կարելի է շարժման անցընել ինչպէս Հայաստանի Ազգային գրադարանի, այնպէս ալ Մշակոյթի, Սփիւռքի կամ Արտաքին գործոց նախարարութիւններուն հնարաւորութիւնները:

«Հրանդ Տինք» հիմնարկի նախաձեռնութեամբ կազմակերպուած ասուլիսի մը ծիրէն ներս քաղաքիս մէջ շահեկան ելոյթներով հանդէս եկան Տիգրան Չարգարեան եւ Պէյրութի Հայկազեան համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրման կեդրոնի տնօրէն Տրթ. Անդրանիկ Տազետեան: Հիւրընկալ հիմնարկի «Հաւաք» սրահի երդիքին տակ տեղի ունեցաւ ասուլիսը, զոր վարեց Վահագն Թեշիշեան: Ներկաներու շարքին էին նախաձեռնարկ հիմնարկի ղեկավարները, կրթական մշակներ, մտաւորականներ, երիտասարդներ եւ այլ հետաքրքիրներ: Ասուլիսի ընթացքին խոշորացոյցի տակ առնուեցան Հայաստանի Ազգային գրադարանը, սփիւռքի թուային գրադարանները եւ այդ բոլորի 21-րդ դարու կացութիւնը: Սփիւռքեան հաւաքականութիւնները թուային արխիւով մը միաւորելու գաղափարին հետամուտ՝ ատենախօսները անդրադարձան թուային արխիւայնացումի եւ թուային գրադարաններու կարելորութեան: Թուայնացնելու եւ այդ ճանապարհով միաւորելու հետամուտ աշխատանքները ամփոփուեցան հեղինակաւոր ատենախօսներու կողմէ:

Երեկոյթի ընթացքին նախ արտայայտուեցաւ Տիգրան Չարգարեան, որ բացատրութիւններ տուաւ Հայաստանի Ազգային գրադարանի ճոխ արխիւին մասին: Արդարեւ, գրադարանի պահեստներուն մէջ կը գտնուին միլիոնաւոր գիրքեր: Հայ մշակոյթի տեսակետէն ամենայատկանշական, առանցքային բոլոր պատմական հրատարակութիւնները կը գտնուին այնտեղ: Տիգրան Չարգարեան բացատրութիւններ տուաւ, որ Թուրքիոյ տարածքի քաղաքներուն մէջ հայկական հրատարակչութեան առումով որքան հսկայական աշխատանք մը տարուած է: Այդ գործին մէջ առիւծի բաժինը կը վիճակի Իսթանպուլին: Ան անդրադարձաւ նաեւ հայատառ թրքերէն հրատարակութիւններուն: Պարբերական մամուլի մասին խօսելով՝ Տիգրան Չարգարեան յիշեցուց, որ 1832



թուականին հրատարակուիլ սկսած էր «Լրոյ Գիր Օսմանեան Կայսրութեան»ը: Նոյն բաժնին մէջ ան առանձնապէս խօսեցաւ ԺԱՄԱՆԱԿ օրաթերթի մասին, որ 1908 թուականէն ի վեր կը հրատարակուի անխափան եւ շնորհիւ Գօչունեան ընտանիքին կը շարունակէ իր առաքելութիւնը:

Չարգարեան ընդգծեց, որ Հայաստանի Ազգային գրադարանին մէջ կը գտնուին հայերէնով հրատարակուած առաջին Աստուածաշունչը, հայերէնով պատրաստուած առաջին համաշխարհային քարտէսը, հայերէն հրատարակուած առաջին գիրքը եւ առաջին հայերէն թերթը: Այս բոլորին առընթեր Հայաստանի Ազգային գրադարանին մէջ կը գտնուին միլիոնաւոր գիրքեր, որոնք ներկայիս կը թուայնացուին: Գիրքերու եւ թերթերու առընթեր, Ազգային գրադարանի պահեստներուն մէջ կը գտնուին նաեւ հանդէսներ կամ քարտփոսթալներ: Կիւթենպերկի կողմէ տպարանի գիւտի կատարուելէն հազիւ քանի մը տասնամեակ անց հայերն ալ հիմնեցին իրենց տպարանները: Չարգարեան մատնանշեց, որ Նոր Զուղայի մէջ հաստատուած է հայերէն առաջին կատարելաւ տպարանը: Հայերէնով երկրորդ Աստուածաշունչը տպուած էր Պոլսոյ մէջ:

Հայաստանի Ազգային գրադարանի արխիւի պատմական արժեքով նմոյշներուն բացատրութիւնը Տիգրան Չարգարեան զուգորդեց հայկական գրատպութեան պատմութեան ու զանազան փուլերուն հետ: Անցելի վերջ ան մանրամասն բացատրութիւններ տուաւ, թէ Հայաստանի Ազգային գրադարանը ինչպիսի համագործակցութեան կապեր ունի թրքահայ համայնքին հետ: Այս բաժնին մէջ ան դիտել տուաւ, որ իր ղեկավարած կառոյցը կը համագործակցի ԺԱՄԱՆԱԿ օրաթերթին, Պատրիարքական Աթոռին եւ «Հրանդ Տինք» հիմնարկին հետ: ԺԱՄԱՆԱԿ օրաթերթը կանոնաւոր ձեւով իր հրատարակած գիրքերը կը փոխանցէ Ազգային գրադարան: Թերթի էլեքտրոնիկ տարբերակներն ալ կը գտնուին գրադարանի թուային արխիւին մէջ, իսկ մէկ կողմէ ալ կը թուայնացուին անցեալի համարները: Տիգրան Չարգարեան ընդգծեց Պատրիարքարանէն Վաղարշակ Սրկ. Սերովբեանի կողմէ Ազգային գրադարանի հետ համագործակցութեան ուղղութեամբ ցուցաբերուած նախանձախնդրութիւնը: Ան կարելորեց նաեւ «Հրանդ Տինք» հիմնարկի հետ հաստատուած սերտ շփումները: Վերջին շրջանին «Աթաթիւրք» գրադարանը շփման մէջ անցած է Հայաստանի Ազգային գրադարանին հետ՝ կարգ մը մատենագիտական աշխատանքներու համար: Բաց աստի, Տիգրան Չարգարեան տեղեկացուց, որ բոլորովին վերջերս Ազգային գրադարանը նոր աղբիւրներ կամ հրատարակութիւններ գտած է՝ Նոր Զուղայի, Պոսթոնի, Հալեպի, Արդուիկի,

Հոմսի կամ Լոնտոնի մէջ հրատարակուած զանազան յուշամատեններ ապահովելով: Հուսկ, Չարգարեան շեշտեց, որ Ազգային գրադարանը ամբողջ թափով կը շարունակէ իր՝ լիարժեք իմաստով գործունեութիւնը:

### Տազետեանի Խօսքը

Իր կարգին, Անդրանիկ Տազետեան ալ մանրամասն բացատրութիւններ տուաւ 1955 թուականին հիմնուած Պէյրութի Հայկազեան համալսարանի գործունեութեան շուրջ: Իր ղեկավարած կեդրոնն ալ հաստատուած է 2011 թուականին: Տազետեան յիշեցուց, որ Հայկազեանը սփիւռքի միակ հայկական համալսարանն է: Իր գլխաւորած Հայկական սփիւռքի ուսումնասիրման կեդրոնը կը ծաւալէ բազմակողմանի գործունեութիւն: Մերձաւոր Արեւելքի համայնքներու վերաբերեալ հետազոտութիւններ կը կատարուին, բանախօսութիւններ կը կազմակերպուին: Սուրիոյ, Իրաքի, Եգիպտոսի, Յորդանանի, Իսրայէլի հայկական հաւաքականութիւնները կ'առնուին խոշորացոյցի տակ: 1915-ին յաջորդած ժամանակաշրջանի իրադարձութիւնները, 1920-ականներուն եւ 1940-ականներուն ապրուած փոփոխութիւնները կ'առնուին լուսարձակի տակ: 1915-ի շրջանին որբանոցներու մէջ գտնուածներու ապագայ կեանքը մասնաւոր ուշադրութեան առարկայ կը դառնայ: Այս բոլորը, բնականաբար, ընդհանրապէս Մերձաւոր Արեւելքի պատմութեան տեսակետէ ալ կարելորութիւն կը ներկայացնեն:

Անդրանիկ Տազետեանի բացատրութիւններով, ի լրումն այս բոլորին, Հայկական սփիւռքի ուսումնասիրման կեդրոնի հետաքրքրութիւններու ծիրին մաս կը կազմեն՝ 21-րդ դարու հայկական ինքնութիւնը, Հայաստան-Սփիւռք համատեղ աշխատանքը, աշխարհի հայկական համայնքներու փոխադարձ ճանաչումը, Մերձաւոր Արեւելքի հայերու փոխադարձ ճանաչումը: Այս բոլորին համար կը կազմակերպուին ակադեմական մակարդակով հաւաքոյթներ: Իր բացատրութիւններուն մէջ Տազետեան առանձնացուց «Իմ ընտանիքիս պատմութիւնը» խորագրեալ աշխատանքը, որով մարդիկ փոխանցած են, ցեղասպանութեան շրջանին իրենց ընտանիքի նախնիներուն բաժին հասածները:

Ատենախօսներու գեկուցումներու աւարտին ներկաները հնարաւորութիւն ունեցան անոնց հարցումներ ուղղելու: Երեկոյթի աւարտին ներկաները հրաժեշտ առին թէ՛ իրենց տրուած բացատրութիւններով յագեցած եւ թէ՛ այս երկու կառոյցներուն նկատմամբ զնահատանքի զգացումով:

«Ժամանակ»

# Պատմական Ակնարկ Լիբանանահայ Ուսանողական Միութիւններու Պատմութեան - 1 - Ակնարկ ԶԵԸ-ի Հայ Համալսարանական Ուսանողաց Միութեան 75-Ամեայ Պատմութեան (1940-2015)

## ՊԵՏՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

ՀՀՈՄ-ի Վարչութեան ատենապետութիւնը վարած են՝ Մեթր Հրաչ Սեդրակեան (1940-1943), Յակոբ Շիրինեան, Վիգէն Գալպեան[41], տոքթ. Ժոզէֆ Գարայեան, տոքթ. Յակոբ Գրգեաշարեան, Վարուժան Պետիկեան, Անդրանիկ Փոլատեան, տոքթ. Գեորգ Բէշիշեան, Գասպար Տէրտէրեան (1955-1957), Էտմոն Կոտալազեան (1957-1958), Չաւեն Սըրրլեան (1958-1961), Ժիրայր Բարթիկեան (1961-1962), Մկրտիչ Լ. Պուլտուքեան, Վահէ Պահատուրեան (1964-1965), Ս. Մարկոսեան, Կ. Բէշիշեան, Յ. Պալեան, Հրայր Գաֆեսեան, Հերմինէ Հաճընլեան, Յակոբ Գասարճեան[42], Սիւան Սիւնեան, տոքթ. Սիմոն Սիմոնեան, տոքթ. Սիմոն Բեռնարդեան, Յովիկ Մարգարեան, Ներսէս Գրգեաշարեան, տոքթ. Էլզա Սաթամեան, տոքթ. Հրայր Բարդիսեան, Կի Մարգարեան (2006-2008), Դաւար Եսայեան, Նաթաշա Բեռնարդեան, Գարին Գալիսճեան (2013-2015)[43]: Վերջին տարիներուն է, որ կը տեսնենք իգական սեռի ներկայացուցիչներ կը ստանձնեն վարչութեան ատենապետութիւնը:

Նոր անդամներ ներգրաւելու համար, 1950-ականներու վերջը Ամերիկեան Համալսարանի ՀԵԸ-ական համալսարանականներ կը մօտենային իւրաքանչիւր հայ ուսանողի եւ անտարբերները կը համոզէին, որ ներկայ ըլլային ՀՀՈՄ-ի կազմակերպած ձեռնարկներուն[44]: Այսինքն՝ Միութիւնը աշխատանք կը տանէր հայ անհատներու մէջ հայկական ինքնութիւնը պահպանել՝ զանոնք ուժացումէ փրկելու համար:

ՀԲԸՄ Վարժարաններու ուսուցիչներէն՝ Օննիկ Սարգիսեան, Վարուժան Պետիկեան, Համբարձում Գումրոյեան, Յովհաննէս Թապագեան, Երուանդ Կրպոյեան[45], Արա Թոփճեան, Վահէ Վահեան, Գերսամ Ահարոնեան, Սօսի Պետիկեան կարելորդ դեր կը խաղային, որ ՀԲԸՄ-ի վարժարաններու շրջանաւարտներ մեծ թիւով մաս կազմէին Համալսարանականներու Միութեան[46]: Հետեւաբար, ՀՀՈՄ-ի Վարչութեան կողմէն ՀԲԸՄ-ի վարժարաններու ուսուցիչներ ալ մօտէն կը հսկէին Միութեան աշխատանքները եւ իրենց կարելին կ'ընէին Բարեգործականի շրջանակի անդամները ներգրաւել ՀՀՈՄ-էն ներս՝ բազմապատկելու համար ՀԲԸՄ-ի Լիբանանի անդամակցութիւնը:

Հայ Համալսարանական Ուսանողներու Միութիւնը կարելորդ շրջանային դեր ունէր՝ նկատի

ունենալով, որ 1958-1961 շրջանին, ինչպէս նաեւ անոր նախորդող տարիներուն ալ Միութեան անդամ էին Յորդանանէն, Եգիպտոսէն, Պարսկաստանէն, Իրաքէն, Կիպրոսէն, Յունաստանէն եւ Սուրիայէն Լիբանանեան այլազան համալսարաններու մէջ ուսանողներ:

Արտասահմանէն եկած այս ուսանող-ուսանողուհիներէն ոմանք իրենց ծանօթներէն ալ կ'անդամագրէին Միութեան: Օրինակ՝ Հայկազեան Գոլէճի ուսանող հալէպցի Չատիկ Գուշեան վարչականը իրեն ծանօթ ուրիշ հալէպցիներ անդամագրած էր Միութեան[47]: 1960-ականներուն տակաւին կային ոչ լիբանանահայ ուսանողներ, ինչպէս՝ Յակոբ Պարսումեան՝ Հալէպէն եւ Սարգիս Բաշիկեան՝ Յունաստանէն[48]: 1974-1975 կրթաշրջանին նուազած էր թիւը ոչ-լիբանանահայ անդամներուն, բայց կային որոշ թիւով սուրիահայեր:



1974 տարեշրջանի ՀԵԸ-ի Համալսարանականներու Վարչութիւն: Աղբիւր՝ 35 Տարի Յուշամատեն ՀԵԸ-ի Համալսարանական Ուսանողաց Միութեան, էջ 8

1974-1975-ին ՀԵԸ-ի Համալսարանականներու Միութիւնը իր կազմակերպած ձեռնարկներուն շնորհիւ բաւական ընդարձակ արձագանգ ձգած էր լիբանանահայ գաղութէն ներս եւ մեծ թիւով համալսարանականներ կամովին կ'անդամակցէին Միութեան[49]:


### ՁԵՆԱՐԿՆԵՐՈՒ ԲՆՈՅՑԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԱՐԺԵՒՐՈՒՄԸ

1940-1944 շրջանին, Միութիւնը բաժնած է իր աշխատանքները տարբեր յանձնախումբերու: Գոյութիւն ունեցած են Սանուց, Գրական, Առողջապահական, Ընկերային, եւ Երաժշտական Յանձնախումբեր[50]: Յետագային, սակայն անոնցմէ մնացած են մշակութային, մարզական եւ ընկերային ենթայանձնախումբերը[51]: Այսօր գոյութիւն ունի այս յանձնախումբերէն ոչ մէկը: Ընդհանրապէս Վարչութիւնը իր ամբողջութեամբ կը կազմակերպէ



ՀԵԸ-ի Համալսարանական Վարչութիւն, 2014

ձեռնարկները առանց աշխատանքի բաժանումի: Հաւանական է, որ աշխատանքի բաժանումը աւելի աշխուժացներ ՀԵԸ-ի Համալսարանականներու գործունեութիւնը:



Բաղաքացիական Պատերազմի տարիներէն առաջ (1940-1975) Միութիւնը ունեցած է աշխույժ գործունեութիւն լիբանանահայ գաղութէն ներս՝ օգտակար ըլլալով իր շրջապատին եւ պատկանած Միութեան: Միութեան սկզբնական տարիներուն յատուկ շեշտ դրուած է հայկական նիւթերով ձեռնարկներու վրայ: 1940-ականներուն Միութեան նպատակն էր հայ ուսանողութեան սերը զօրացնել «հայ լեզուին, հայ պատմութեան, հայ մշակոյթին, հայ ազգին եւ հայրենիքին հանդէպ[52]...»: Այս բոլորը կը նկատուէին հայկական ինքնութեան բաղկացուցիչ տարրերը:

25 Յունուար 1948-ին կը կազմակերպուի «Հայ Երաժշտութիւնը» խորագրեալ ձեռնարկ մը երաժիշտ Շահան Պերպերեանի բանախօսութեամբ, որ հայ երաժշտութիւնը կը գերադասէ բոլոր երոպական երաժշտութեանց[53]: Միաժամանակ պայքար կը մղուի թրքական երաժշտութեան ունկնդրութեան դէմ:

Շար. 5

[41] Տես՝ «Հայ Համալսարանական Ուսանողաց Միութեան Ձեռնարկները», Չարթօնք, 16 Յունուար 1948:  
[42] Աւելի մանրամասնութեան համար տես՝ Յակոբ Գասարճեանի «Նուիրում ՌԱԿ-ի ճամբով Յիսնամեայ Գործունեութեան Արձանագրութիւն», Երեւան, Տիգրան Մեծ հրատարակչատուն, 2016:  
[43] Տես՝ «Յուշամատեն Նուիրում ՀԵԸ-ի Համալսարանական Ուսանողաց Միութեան 35-Ամեակին եւ ՀԲԸՄ-ի Յլեանս Նախագահ Ալեք Մանուկեանի Նախագահութեան 20-Ամեակին» գիրքը: Իսկ 1975-էն ետք կարգ մը ատենապետներու անուններ առնուած են Խօսնակ-ի մէջ երեւցող յօդուածներէն:  
[44] Թորոսեան, «Հարցազրոյց Դոկտ. Չաւեն Սըրրլեանի հետ», Խօսնակ, Յունուար 2016, էջ 38:  
[45] Հարցազրոյց ՀԲԸՄ-ի Խօսնակի Նախկին խմբագիր Պարոյր Աղպաշեանի հետ, 11 Նոյեմբեր 2015:  
[46] Հարցազրոյց Տիկ. Արփի Հաճընլեան-Խաչիկեանի հետ, 20 Նոյեմբեր 2015:  
[47] Թորոսեան, «Հարցազրոյց Դոկտ. Չաւեն Սըրրլեանի հետ», Խօսնակ, Յունուար 2016, էջ 38-39:  
[48] Հարցազրոյց Տիկ. Արփի Հաճընլեան-Խաչիկեանի հետ, 20 Նոյեմբեր 2015:  
[49] Հարցազրոյց Տոքթ. Սիմոն Սիմոնեանի հետ, 4 Նոյեմբեր 2015: Տոքթ. Սիմոն Սիմոնեան ատենապետած է ՀԵԸ-ի Համալսարանական Միութիւնը 1975-ին:  
[50] Գալֆայեան, «Հայ Համալսարանական Ուսանողականներու Միութիւնը», Հայ Ուսանող, Փետրուար 1944, էջ 23-24:  
[51] Հարցազրոյց Տիկ. Արփի Հաճընլեան-Խաչիկեանի հետ, 20 Նոյեմբեր 2015:  
[52] Այսպէս կը նշէ Միութեան վարչական անդամներէն Յակոբ Նորաշխարհեան իր բացման խօսքին մէջ: Տես՝ «Հայ Համալսարանական Ուսանողաց Միութեան Ձեռնարկները», Չարթօնք, 16 Յունուար 1948:  
[53] «Հայ Համալս. Ուս. Միութեան Դասախօսութիւնը», Չարթօնք, 29 Յունուար 1948:

### Արցախը Նախորդ Շաբաթ

Էջ 02

## Արցախ Այցելած Օտարերկրեացի Չբուսաշրջիկներու Թիւը 2017-ին Աւելցած Է 41 Տոկոսով

Շուշի, Ստեփանակերտ, Գանձասար, Տիգրանակերտ: Արդէն հանրահռչակուած զբոսաշրջային ուղղութիւններու եւ զբոսաշրջավայրերու կողքին զբոսաշրջութեան վարչութիւնը այս տարի կը փորձէ նորութիւններ ապահովել ե՛լ նոր զբոսաշրջավայրերու ե՛լ թեմայական զբոսաշրջութեան տեսքով: Արկածային զբոսաշրջութիւնը կրնայ դառնալ անոր յաջողած ուղղութիւններէն մէկը: 2017-ին մի քանի ծրագիրներ փորձարկուած են: Անոնցմէ ամենանշանակալին «Ճանապարհ Թրեյլ»-ի իւրօրինակ շնորհանդէսն էր, որ ազդարարուեցաւ իւլթրամարաթոնի յայտնի ներկայացուցիչ Թէմա Ալթունի ուխտագնացութիւն-մարաթոնով՝ Արցախի հիւսիսէն մինչեւ հարաւը: Նաեւ թէթել օդակնացութեան ներգրամամբ մի քանի ծրագիրներ իրականացուեցան հայաստանեան գործընկերներու մասնակցութեամբ: Այս շարքի ամենաբազմամարդ միջոցառումն ալ օդային փառատօնն էր՝ Ստեփանակերտի օդակայանին մէջ: Երկրագործական-զբոսաշրջութիւնը (agro-tourism) աշխուժացնելու ծրագիր եւս կայ: Պետութիւնը պիտի աջակցի անոնց, որոնք գիւղերուն մէջ կը կառուցեն հիւրատուներ, տարուան ծրագիրներէն մէկը կ'առանձնացնէ Արտակ Գրիգորեան եւ կը մանրամասնէ, որ այդ ծրագիրը ինքնին շարունակութիւն կ'ունենայ. «Առաջին քայլը պիտի ըլլայ անկա: Զանի որ եթէ գիշերակացը կայ, մարդիկ անոր հետ պիտի սկսին առաջարկել իրենց ծառայութիւնները, մասնաւորաբար սննդամթերքի արտադրութիւն, որ պիտի ըլլայ զբոսավարի ծառայութիւն եւ այլն»:



Խոստմնալի ուղղութիւններէն մէկը կը համարուի խոհանոցային-զբոսաշրջութիւնը (gastro-tourism): Պատասխանատուները համոզուած են, որ իրենց գործին լաւապէս տիրապետող մարդոց աշխատելու պարագային արցախեան խոհանոցը եւս կրնայ զբոսաշրջութեան աշխուժացման մէջ մեծ դեր ունենալ: Առաջին փորձերը եղած են գիւնեգործութեան ոլորտէն ներս: Արդիւնքներէն գոհ են: «Արդէն կան հետաքրքրուողներ թե՛ գիւնեգործութեամբ զբաղողներէն, թե՛ զբոսաշրջիկներէն: Պիտի փորձենք համադրել այս երկուքը: Ծրագիրը բաւական տարողունակ է եւ վերջնական արդիւնքին հասնելու համար շատ ժամանակ կը պահանջուի: Սակայն յոյս ունինք, որ յամառ աշխատքով այս տարի կը ստանանք որոշակի արդիւնք», - լաւատես է Արցախի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ զբոսաշրջութեան հարցերու նախարարութեան զբոսաշրջութեան վարչութեան պետը:

2018-ի նորութիւններէն մէկն ալ զբոսաշրջային տեղեկատուական կեդրոններու հնարաւորութիւններու յաւելումը պիտի ըլլայ: Չբոսաշրջիկը Արցախի մէջ տեղեկատուութիւն ստանալու հնարաւորութիւն կ'ունենայ շաբաթը 7 օր, օրը 24 ժամ:

## Երեւանը Այս Շաբաթ

### Երեւանի Մէջ Կատարուելիք Իրադարձութիւններ

15.01.2018 16:00| Երեւան | հանդիպում



Յունուար 15-ին ժամը 16:00-ին «Նարեկացի» արուեստի միութեան կեդրոնէն ներս տեղի կ'ունենայ «Օսիբ Մանտելշամը եւ արդի հայ պոեզիան» խորագիրը կրող գրական հանդիպումը:

Միջոցառման կը ներկայացուին Օսիբ Մանտելշամի նշանակութիւնը եւ դերը հայ գրականութեան մէջ եւ այն, թէ արդի հայ գրողները ինչպէս կը շարունակեն մեծ դասականի ավանդույթները:

Միջոցառումը կ'իրականացուի Զամահայկական գրողներու միութեան գրականագետներու նախաձեռնութեամբ (Նախագահ՝ Աբգար Ափինեան):

Աբգար Ափինեան ծնած է 1960 թուականի Փետրուար 5-ին Վանաձոր:

2016-էն Զամահայկական գրողներու միութեան նախագահ է:

Եղած է Զայաստանի գրողներու միութեան առաջին քարտուղար (1996-2001), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մամլոյ դիւանի պետ եւ Գարեգին Ա. վեհափառ հայրապետի քարտուղար (1994-1996):

Մուտքը ազատ է:

18.01.2018 19:00| Երեւան | ներկայացում

Յունուար 18-ին ժամը 19:00-ին Պոլիս թատրոնին մէջ (Գրողներու միութեան շէնք) տեղի կ'ունենայ Նարեկ Դուրեանի «Իմ կնոջ անունն է Մորիս» ներկայացումը:



Այս ներկայացման գաղափարը յղացուած է այն բանէն ետք, երբ Նարեկ Դուրեանը ծանօթացած է ֆրանսահայ Բաֆֆի Շարտի հետ, որ հեղինակած է բազմաթիւ թատերախաղեր, ներառեալ «Իմ կնոջ անունն է Մորիս» թատերախաղը: Նարեկ Դուրեանը այս թատերախաղի մասին շատ լսած էր եւ տեղեկ էր, որ յաջող ներկայացում է ու Փարիզի մէջ մէկ տարուան ընթացքին մէկ միլիոն հանդիսատես ունեցած է: Բեմադրուած է 50-է աւելի երկիրներու մէջ:

Այն բանէն ետք, երբ հեղինակը տեսած է Նարեկ Դուրեանի ներկայացումները, ցանկութիւն յայտնած է, որ այս թատերախաղը բեմադրէ Նարեկ Դուրեանը:

Յեղինակ՝ Բաֆֆի Շարտ  
Տեղայնացում, երաժշտական ձեւաւորում, բեմադրութիւն՝ Նարեկ Դուրեան  
Տոմսերու արժեքը՝ 1500, 2000, 2500, 3000, 3500, 4000 դրամ:

19.01.2018 19:00| Երեւան | հանդիպում



Յունուար 19-ին ժամը 19:00-ին «Նարեկացի» արուեստի միութեան կեդրոնին մէջ կը մեկնարկուի հանդիպումներու շարք՝ «Երկխօսութիւն արուեստագետի հետ»:

Միջոցառումը կը կրէ «Իմ կեանքն արուեստում» խորագիրը:

Ասիկա հանդիպումներու շարք է, որ պիտի ներկայացնէ արուեստի մէջ իրենց ճամբան

անցած, հասարակութեան յայտնի, իրենց տեղը գտած արուեստագետներուն ու մշակութային գործիչներուն:

Անոնք հանդիսատեսի հետ կը կիսեն իրենց ընտրած ոլորտի եւ յատկապէս անցած ուղիի մասնագիտական դժուարութիւններուն ու զանոնք յաղթահարելու մասին իրենց փորձառութիւնները, կը խօսին նաեւ այդ ճամբուն վրայ հաւանական անկումներուն եւ ուրախաբեր վերելքներուն մասին:

Կը տրուին հիմնական հարցեր՝ մեկնելով Կ. Սթանիսլավսքի «Իմ կեանքն արուեստում» գիրքին մէջ տեղ գտած գլուխներէն:

Մեր առաջին հիւրն է Յ. Թումանեանի անուան պետական տիկնիկային թատրոնի գեղարուեստական ղեկավար, բեմադրիչ Ռուբէն Պապեանը:

Հանդիսատեսը եւս հնարաւորութիւն կ'ունենայ յղելու իրեն հետաքրքրող հարցերը:

Մուտքը ազատ է:

20.01.2018 14:00| Երեւան | ներկայացում



Յունուար 20-ին ժամը 14:00-ին Յովհաննէս Թումանեանի անուան պետական տիկնիկային թատրոնին մէջ տեղ կ'ունենայ «Կարմիր գլխարկը» բեմադրութիւնը: Ըստ Շառլ Փերրոյի՝

«Կարմիր գլխարկը» - Շառլ Փերրոյի աշխարհահռչակ հեքիաթի ինքնատիպ բեմադրութիւնն է տիկնիկային թատրոնին մէջ: Այս բեմադրութիւնը դուրս է հեքիաթի ավանդական պատկերացումներէն. անսպասելի կերպով կը ներկայանան Կարմիր գլխարկը, խիզախ տատիկը, գայլն ու միւս հերոսները:

Բեմականացումը՝ Ե. Մանարեան  
Բեմադրիչ՝ Ա. Մաղաքեան  
Նկարիչ՝ Յ. Գասպարեան  
Երաժշտական ձեւաւորումը՝ Լ. Սարգսեան, Ս. Սարգսեան  
Հասցէ՝ Երեւան, Սայաթ-Նովայի փողոց, 4 շէնք  
Տոմսերու արժեքը՝ 1000 դրամ:

21.01.2018 14:00| Երեւան | ներկայացում

Յունուար 21-ին ժամը 14:00-ին Յովհաննէս Թումանեանի անուան պետական տիկնիկային թատրոնին մէջ տեղի կ'ունենայ «Մանտաշափիկ» ներկայացումը:



«Մանտաշափիկ» ստուերային ներկայացումը հիմնուած է Յ.Բ. Աւտրսընի համանուն հեքիաթին վրայ: Ներկայացման մէջ կ'օգտագործուին ստուերային թատրոնի տարատեսակները - ոգեւորիչ հատուածներ:

Հեքիաթը աղջկան մը մասին է, որ կը ծնի ծաղիկի մէջէն ու անցնելով բազմաթիւ փորձութիւններէ ու արկածներէ՝ կը հասնի իր երազանքին:

Բեմադրիչ՝ Ս. Մովսէսեան  
Նկարիչ՝ Կ. Օսանեան  
Տոմսերու արժեքը՝ 1000 դրամ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մարաշի Աղետի Յիշատակում

Սիրելի հայրենակից,  
Լիբանանի Մարաշի Հայրենակցական Միությանը պիտի յիշատակե Մարաշի աղետին 98-րդ տարելիցը:

Նոր Մարաշի հայ երեք յարանուանութեանց եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենան Ս. Պատարագ, Պաշտամունք եւ հոգեհանգստեան պաշտօններ Կիրակի, 21 Յունուար 2018-ին Մարաշի հին եւ նոր ննջեցեալ հայրենակիցներուն հոգիներուն համար:

Կը հրաւիրենք Ձեզ բոլորդ՝ ներկայ գտնուելու վերոյիշեալ եկեղեցական արարողութիւններուն՝ յարգելու համար խնկելի յիշատակը մեր ննջեցեալներուն:

Ս. Զառասնից Մանկանց եկեղեցի  
Յաւարտ Ս. Պատարագի ժամը 10:00

Ս. Փրկիչ եկեղեցի  
Հայ Աւետարանական եկեղեցի ժամը 10:00

Յաւարտ եկեղեցական արարողութեանց, բոլոր հայրենակիցները հրաւիրուած են Միութեանս նորակառոյց սրահը՝ հոգեսուրճ առնելու եւ յարգելու մեր նահատակներուն յիշատակը:

Լիբանանի Մարաշի  
Հայրենակցական Միութեան  
Վարչութիւն

ՄԱՅԱԶԴ

Տեր եւ Տիկին Նորայր Մկրտիչեան եւ զաւակունք  
Տեր եւ Տիկին Արա Մկրտիչեան եւ զաւակունք  
Տեր եւ Տիկին Պօղոս Մկրտիչեան եւ զաւակունք  
Տեր եւ Տիկին Վարդան Մկրտիչեան եւ զաւակունք  
Տիկին Վարդուհի Ծալեան եւ զաւակունք  
Տիկին Մարի Կիրիւնեան եւ զաւակունք  
Եւ համայն Մկրտիչեան, Սարգիսեան, Թերզեան, Թիւթիւնեան, Փաշայեզեան, Կերկերեան ընտանիքներ եւ ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին

ԻԱԹՈՒՆ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ  
(Ծնեալ՝ Սարգիսեան 1927-ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 14 Յունուար 2018-ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 15 Յունուար 2018-ին կէսօրէ ետք ժամը 2:00-ին Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ, Ռմէյլ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի ազգային գերեզմանատունը:

Յաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան մինչեւ երեկոյեան ժամը 7:00 եկեղեցւոյ սրահին մէջ ինչպէս նաեւ Երեքշաբթի 16 Յունուար 2018-ին «Արարատ» Մարզական Միութեան սրահին մէջ, Խալիլ Պատարուի, կէսօրուայ ժամը 12:00էն երեկոյան ժամը 8:00:

\*\*\*

Այս տխուր առիթով «Չարթօնք» իր խորագագաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալին ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն եւ ի մասնաւորի Ընկ. եւ Տիկ. Նորայր Մկրտիչեանին եւ Տեր եւ Տիկ. Վարդան Մկրտիչեանին:



Արձագանգներ Առօրեայէն

Տոկոսներու Բարձրացումներ եւ Ոչ Միայն

Ճեպագրոյց մը Լիբանանի Կեդրոնական Դրամատան Նախկին փոխկառավարիչ՝ Պրն. Մկրտիչ Պուլտուքեանի Հետ



Լիբանանի դրամատուներու մէջ վերջերս նկատելի է տոկոսներու բարձրացում մը թէ՛ լիբանանեան եւ թէ՛ Ամերիկեան տոլարով պանքային աւանդներու վրայ:

Այս նիւթին շուրջ կարճ գրոյց մը ունեցանք Պրն. Մկրտիչ Պուլտուքեանի հետ՝ փորձելով հարց տալ, թէ այս երեւոյթը ուրիշ կապ ունի՞ անցեալ ամիս Ֆետերալ Ռիզըրվի կողմէ ամերիկեան տոլարով աւանդներու վրայ տոկոսի բարձրացումի որոշումին հետ:

Պրն. Պուլտուքեան պատասխանեց, ըսելով որ ինք անձնապէս ուղղակի կապ մը չի տեսներ այս երկուքին միջեւ պարզ այն պատճառով, որ Լիբանան ուղղակիօրէն կապուած չէ Ֆետերալ Ռիզըրվին հետ այնպէս, ինչպէս կապուած են Լոնտոն, Եւրոպա կամ այլ երկիրներ:

Լիբանանի մէջ դրամատնային տոկոսներու բարձրացումը մեր յարգելի գրուցակիցը կապեց այլ ազդակներու, ինչպէս՝

Զանի մը ամիս առաջ Վարչապետի հրաժարումով լիբանանեան շուկայի մէջ ստեղծուած մտահոգիչ իրավիճակին, երբ լիբանանցիք սկսան իրենց լիբանանեան դրամանիշով գումարները տոլարի վերածել: Այդ օրերուն Լիբանանի Կեդրոնական դրամատունը ստիպուած եղաւ քանի մը միլիառ տոլար շուկայ իջեցնել հաւասարակշռելու պահանջը եւ լիբանանեան դրամանիշի արժէքը կայուն պահելու համար: Այդ պատճառով լիբանանեան աւանդներու վրայ դրամատնային տոկոսը աւելցաւ քաջալերելու մարդոց իրենց աւանդի գումարները լիբանանեանով պահ տալ դրամատուներուն:

Երկրորդ ազդակը, որ մասնագետ մեր գրուցակիցը նշեց, Տուպայի երեւոյթն է, որուն դրամատուները համեմատաբար բարձր տոկոսներ կու տան ներգրաւելու արաբական դրամագլուխը: Այս պատճառով Լիբանան ստիպուած է մրցիլ Տուպայի հետ՝ չկորսնցնելու իր դրամատուներուն մէջ պահ դրուած արաբական դրամագլուխը, որ շատ կենսական է Լիբանանի համար:

Երրորդ ազդակը պարտատոմսերն են: Կեդրոնական Դրամատունը կարենալ ֆինանսաւորելու համար Լիբանանի 80 միլիառ տոլարի պարտքը՝ պարտատոմսերու վրայ տոկոսը բարձր նշանակած է՝ քաջալերելու համար լիբանանցիք կամ օտարներ լիբանանեան դրամանիշով թէ տոլարով երկար ժամկետով պարտատոմսեր գնել: Լիբանանեան դրամատուները, օգտուելով Կեդրոնական Դրամատան պարտատոմսերու բարձր տոկոսի առիթէն, իրենք ալ այդ պարտատոմսերէն կը գնեն, որովհետեւ դրամատուներուն մէջ կայ շուրջ 170 միլիառի հասնող աւանդներ, որոնք միշտ ալ կարելի չէ արտաքին շուկային մէջ ներդրել:

Մեր հարցումին թէ Ամերիկայի եւ Լիբանանի մէջ տոկոսներու բարձրացումը նաեւ կապուած չէ՞ հաւանական դրամական ուռուցումը (inflation), ԱՄՆ-ի պարագային, զսպելու հետ: Պրն. Պուլտուքեան կատակեց՝ ըսելով, որ Համալսարանական տեսութիւնները միշտ ալ չեն համընկնիր իրական շուկային հետ, որ շատ յաճախ տարբեր տրամաբանութեամբ կ'ընթանայ: Ամերիկեան դրամական մեծ ընկերութիւններ, ինչպէս՝ Wall Street (որ ամերիկեան տոլարի վրայ երկար տարիներու ցած տոկոսէն մեծ շահեր ապահովեց, երբ մարդիկ նախընտրեցին սակարանային շուկայի (stock-market) մէջ շահագործել իրենց դրամագլուխը, որովհետեւ այս ձեւով աւելի կարելի է շահիլ, քան չնչին տոկոսով մը իրենց գումարը դրամատան պահ տան: Ուրեմն նման դրամատիրական ընկերութիւններ, դաշնակցեցող Federal funds-ի հետ, իրենք են, որ ստանձնած են խաղը, հետեւաբար ամեն բան կախեալ է անոնց քաղաքականութենէն:

Եզրափակելու համար, երբ հարցուցինք, որ այս առումով ապագայի նկատմամբ ի՞նչ կանխատեսութիւն ունի ինք: Պրն. Պուլտուքեան չուզեց կանխատեսել՝ Լիբանանը նկատելով ո՛չ կայուն եւ անառողջ երկիր այս իմաստով եւ ան տնտեսական կայունութիւնը կապեց երկրին քաղաքական եւ ապահովական կայունութեան հետ, որ կենսական է ամեն տնտեսական վտանգ կանխելու համար:

«Խմբ.»

Advertisement for RagMamoul.net featuring a logo with a stylized 'R' and 'M' and the text 'Այցելէ՛ Կարդա՛ Տարածէ՛ www.RagMamoul.net'

Advertisement text: «Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպորտած վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:»